սուբյեկտներին չի կարող թուլացնել գովազդի պետական կարգավորումը, քանի որ դա հղի է ոչ միայն շուկայական հարաբերությունների այլ նաև ամբողջ հասարակության համար բացասական դրսևորումներով: Իրավական կարգավորման չիրականացումը կարող է բերել որոշակի խախտումների, սպառողների խաբվածության, մրցակիցների նկատմամբ անարդար վերաբերմունքի: Այդ պատճառով գովազդային օրենսդրությունը հանդիսանում է մրցակցային իրավունքի անբաժանելի մաս, որն ապահովում է արդյունավետ մրցակցության և արդար առևտրային սկզբունքների աջակցություն, որոնք հիմնականում ուղղված են սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կիրառմանը:

Վերջերս վեճեր են սկսվել ոչ թե կապված տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտության հետ, այլ դրա սահմանների, ձևերի և ինտենսիվության հետ: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ շուկայական մեխանիզմները վերարտադրության գործընթացի ոչ բոլոր գործառույթներն են իրականացվում, քանի որ դրանք բավարար չեն հաստատելու մակրոտնտեսական հավասարակշռություն: Նոբելյան մրցանակակիրները վաղուց են կասկածի տակ առել շուկաների արդյունավետ աշխատանքի տեսությունը, հիմնվելով տեղեկատվության «անհամաչափ» ստացման փաստի վրա. վաճառողներն ու գնորդները ոչ միշտ ունեն սպառիչ տեղեկատվություն որպեսզի ճիշտ ընտրություն կատարեն: Տեղեկատվության անհամաչափությունը պահանջում է կառավարության առավել ակտիվ մասնակցություն տնտեսության կարգավորման մեջ, ինչ դեմ այդքան երկար պայքարում էին ազատ շուկայի կողմնակիցները: Ինչպես կարծում է նոբելյան մրցանակակիր պրոֆեսոր Ջոզեֆ Ստիգլիցը, ոչ լրիվ կամ սխալ տեղեկատվությունը կարող է ավերել շուկաները, և կառավարության պարտքն է օգնել վերականգնել այդ ավերածությունները[1]:

Ժամանակակից պայմաններում տնտեսության պետական կարգավորումը հանդիսանում է վերարտադրության բաղկացուցիչ մաս: Այն լուծում է բազմազան խնդիրներ, օրինակ տնտեսական աճի խթանում, զբաղվածության կարգավորում, արտահանման խթանում: Տնտեսության պետական կարգավորման ուղղություններն ու ձևերը պայմանավորված են տվյալ ժամանակահատվածում երկրի տնտեսական և սոցիալական խնդիրների բնորոշումներից և խորությունից:

Համարձակորեն կարելի է պնդել, որ պետությունը հանդես է գալիս որպես երաշխավոր՝ գովազդի շուկայի գործող հարաբերությունների համակարգի կայացման և ձևավորման համար: Փորձելով ստեղծել մրցակցության համար բարենպաստ պայմաններ գովազդի ոլորտում, այն օգնում է շուկայական համակարգին արդյունավետ որոշել, թե ի՞նչ պետք է արտադրվի, ինչպե՞ս պետք է բաշխվեն ռեսուրսները արտադրության գործընթացում, ո՞ւմ և ի՞նչ գնով պետք է վաճառվեն ապրանքները: Առանց պետության մասնակցության հնարավոր չէ ձևավորել մրցակցային միջավայր, որը հանդիսանում է երկրի տնտեսական բարգավաճման գրավականը: Սակայն արդյունավետ, օգտակար գովազդը դա ոչ միայն պետության, այլ նաև գովազդի շուկայի մասնակիցների խնդիրն է: Այս ոլորտում մրցակցությունը տարբերվում է մրցակիցների վարքի էթիկական նորմերի առանձնահատկությամբ: Այս տեսանկյունից մեծ կարևորություն է տրվում ոլորտի ինքնակարգավորման համակարգին, որը կազմակերպում է գովազդի վերահսկում գովազդային շուկայի մասնակիցների կողմից ընդունված էթիկական ստանդարտների և նորմերի օգնությամբ:

ՌԱՖԱՅԵԼ ԻՍԱԽԱՆՈՎ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող տ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԷԿՈԼՈԳԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Հանրապետության կարևորագույն, անհետաձգելի լուծումներ պահանջող էկոլոգիական խնդիրների շարքում Սևանա լճի մակարդակի բարձրացման պրոբլեմն է, այլապես նրա կործանմամբ Հայաստանը կվերածվի կիսաանապատային երկրի: Նկատենք, որ ինչպես այժմ, այնպես էլ հեռանկարում Սևանա լիճը գնահատվում է իբրև հանրապետության առավելապես տնտեսական և խմելու ջրի մատակարարման խոշոր աղբյուրը:

Սևանի խնդրի առաջացումը սխալ որոշումների հետևանք է՝ կապված լճի դարավոր ջրային պաշարները հանրապետության էներգետիկ բազայի նպատակներով օգտագործելու, ոռոգելի հողատարածքների նկատելի ավելացման հետ:

Ոռոգելի էներգետիկ կոմպլեքսի կառուցումը և շահագործման հանձնելը հսկայական դեր խաղացին Հայաստանի տնտեսության կառուցվածքային խոր փոփոխություններ իրականացման գործում, իրական հնարավորություն ստեղծվեց նրա տնտեսության ինտենսիվ զարգացման համար: 1956թ. հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը 1927թ. համեմատությամբ ավելացավ 10 անգամ, դրա հետ մեկտեղ ՀԷԿ-ի կասկադի տեսակարար կշիռը կազմեց 90%: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացավ 80 անգամ:

Ոռոգելի հողատարածքները ջրանցքների ցանցի ավելացման շնորհիվ հասան ավելի քան 80 հազար հեկտարի, որը կազմում էր հանրապետության բոլոր ոռոգելի հողերի գրեթե 1/3-ը:

Սևանի լճի ջրերի օգտագործումը 25 տարվա ընթացքում (1937-1962թթ.) հանգեցրեց նրա դարավոր պաշարների 1/3-ով կրճատման, իսկ 40 տարվա ընթացքում՝ ավելի քան 41%-ով:

---

[1] www.internews/ras/ru/report/tvrus/tv.html

Անցյալ դարի 60-ական թվականների սկզբից նկատելի դարձավ, որ Սևան-Հրազդան էներգետիկ-ոռոգելի կոմպլեքսի ընթացքում թույլ են տրվել լուրջ հաշվեսխալներ, և լճի ջրերի հետագա նախատեսված օգտագործումը վտանգի տակ դրեց Սևանա լճի գոյությունը: Լճի մակերեսի կտրուկ իջեցումը և դրա էկոլոգիական հավասարակշռության խախտումը նոր խնդիրներ առաջացրեցին Սևանի պրոբլեմի լուծման մեջ: Շահագործման հանձնելով Հրազդանի ՊՇԷԿ-ը, Տաթևի ՀԷԿ-ը և Հայաստանի ԱԷԿ-ը՝ արմատապես փոխվեց հանրապետության էներգետիկ բազան, և ռեալ հնարավորություն ստեղծվեց տարվա կտրվածքով լճից ջրամատակարարումը կասեցնել էներգետիկ կարիքների համար ոռոգման սեզոնում, ՀԷԿ-ի կասկադը փոխադրել աշխատանքի նոր ռեժիմի:

Այսպիսով Սևանի պրոբլեմը ստացավ միանգամայն այլ ֆունկցիոնալ նշանակություն: Հանրապետության ժողտնտեսության կտրուկ վերելքի գործում Սևանն իր դերը կատարեց, և այժմ հարց դրվեց նրա պահպանման և մասնակի վերականգնման համար: Եվ այս պարագայում պահանջ առաջացավ գտնելու լճից ջրի բացթողման հավասարակշռությանը և նրա մակարդակի բարձրացմանը նպաստող նոր աղբյուրներ:

Դրանով վերականգնվեցին Արարատյան դաշտով հոսող Մեծամորի, Քասախի և Սևանի հարավ-արևելքում գտնվող Արփա գետերը:

Առաջին երկու գետերի վրա դաշտավայրի դրենաժային ջրերի մասնակի օգտագործման հետ 1966թ. սկզբներին կառուցվեցին Մխչյանի և Արտաշատի պոմպային կայանները՝ տարեկան 175 մլն մ^3 ջրի ընդհանուր հզորությամբ և Ապարանի ջրամբարը՝ 80 մլն մ^3, որոնք մասնակիորեն փոխարինեցին Սևանի ջրերին, իսկ Արփա գետի ջրի մի մասը՝ տարեկան 250 մլն մ^3 ծավալով, նախատեսվեց Արփա-Սևան թունելով ուղղել դեպի լիճը: Թունելի կառուցումն ավարտվեց 1981թ., և Արփա գետի ջրերը սկսեցին հոսել դեպի Սևանա լիճ, որը և նշանակալիորեն նպաստեց լճի մակարդակի աստիճանաբար բարձրանալուն:

Սակայն Սևանա լճի հարաբերական փրկության ուրախությունը անժամանակ էր: Կապված ԽՍՀՄ-ի փլուզման հետ՝ Հայաստանում տիրեց տնտեսական սուր ճգնաժամ. հանրապետությունը փորձության ենթարկվեց էներգակիրների մեծ պակասի հետևանքով: Եվ այդ ժամանակ վերհիշեցին, որ գոյություն ունի Սևանա լիճը, որի ջրամատակարարմամբ կարելի է ՀԷԿ-ի կասկադի հիման վրա արտադրել անհրաժեշտ քանակի էլեկտրաէներգիա: 1992 թվականից սկսվեց ոչնչով չարդարացվող Սևանա լճի ջրային պաշարների անխնա օգտագործումը: Միայն 1992-1994 թվականների ընթացքում այն կազմեց 3869 մլն մ^3 ջուր: 1993 թվականին Սևանա լճից օգտագործված ջրի քանակը ռեկորդային եղավ՝ 1643 մլն մ^3, որը հավասարազոր էր լճի մակարդակի 1,5 մետր իջեցման կամ էլ ոռոգելի հողերի համար ջրի ուր տարվա պահանջարկին:

Եթե միայն լճի զոհաբերությունն ուղղված լիներ ցրտի ու մթության մեջ տառապող հանրապետության բնակչության տաքացման ու լուսավորության նպատակին, կարելի է ինչ-որ կերպ համակերպվել Սևանի հանդեպ այդպիսի մոտեցման հետ:

Բայց ողբերգությունը կայանում է նրանում, որ մի կողմից ջրաքամվեց լիճը, մյուս կողմից ժողովուրդը շարունակում էր կրել ցրտի ու մթության տառապանքները, որոնք հանրապետության հազարավոր քաղաքացիների մահվան պատճառ դարձան: Ջերմության ու լույսի բացակայությունը, գործազրկության արագընթաց աճի և նյութական անապահովության հետ մեկտեղ՝ պայմանավորեցին հանրապետության քաղաքացիների արտագաղթի արագացման գործընթացը արտասահմանյան երկրներ:

Դժբախտությունը կայանում է ոչ միայն և ոչ այնքան Սևանա լճի դարավոր պաշարների անպատասխանատու օգտագործման մեջ, որքան մեծապես նրանում, որ լճի ճակատագիրն ահա արդեն երկրորդ անգամ տրվում է այն մարդկանց, որոնց իրավունք է վերապահված առանց հսկողության տնօրինել լճի ջրային պաշարները, բայց հասկանալ չի տրված, որ Սևանը ոչ միայն ջրամբար է, որից չորս տարվա ընթացքում (1992-1995թթ.) կարելի է 4,37 մլրդ մ^3 ջուր խլել և ինչ-որ հետագա 15 տարիներում վերադարձնել համապատասխան քանակի՝ ջուրը այլ ավազաններից, գետերով տեղափոխելու հաշվին: Հարկ է նշել, որ լճից ջրի խելամիտ բացթողման ընթացքում (տվյալ դեպքում ոչ խելամիտի տակ պետք է հասկանալ ջրի անհսկելի բացթողումը, այսինքն՝ տարեկան 1,0 մլրդ մ^3 ավել), յոթ տարում արտադրել Սևան-Հրազդան կասկադի ՀԷԿ-ով մոտ 4,0 մլրդ կվտ էլեկտրաէներգիա և միաժամանակ բավարարել ոռոգման կարիքները: Սակայն, ցավոք, էներգետիկ սուղ ճգնաժամի շրջանում տեղ էր գտել Սևանա լճի ջրային պաշարների օգտագործման համար արդեն մեկ անգամ իրեն վարկաբեկած պրակտիկայի կրկնությունը:

Սևանը ցամաքացումից փրկելու, նրա գոյության նախնական պայմանների վերականգնման պրոբլեմի էությունը ներկայումս կայանում է 1904 մետրով ծովի մակերևույթից լճի մակարդակի բարձրացումը, որի դեպքում կարող են կանխվել նրա որակազրկվելու նեգատիվ գործընթացները և ձեռք բերել հիդրոբիոլոգիական ռեժիմ: Սևանը, որպես կենդանի օրգանիզմների կապվածության էկո-համակարգ, անմիջականորեն արձագանքում է անտրոպոգեն գործոնների փոխազդեցության, լճի կենսագենետիկական (բիոգեն) ռեժիմին: Ջրի մակարդակի կտրուկ նվազումը պայմանավորեց կապտա-կանաչավուն ջրիմուռների բուռն զարգացումը, որը ոչ միայն որակազրկեց խմելու ջրի որակը, այլև կործանարար կերպով անդրադարձավ Սևանի իշխան ձկան համար անհրաժեշտ կեր հանդիսացող մի քանի կենդանի օրգանիզմների ոչնչացման վրա:

Այսպես, եթե 1925-1940 թվականներին իշխանի որսը տարեկան փոփոխվում էր 4,5 հազ. ցենտներից մինչև 6,0 հազ. ցենտներ, ապա 80-ական թվականների վերջերին դա, փաստորեն, հանգեցրեց զրոյի: Իշխանի քանակի կտրուկ նվազումը բարենպաստ պայմաններ ստեղծեց սիգի քանակի ավելացման համար: Այստեղ տեղին է նշել, որ սիգը տեղական ձուկ չէ և Սևան է տեղափոխվել 1924թ. Լադոգա և Չուդ լճերից: Չորս տարվա ընթացքում լճի մեջ բաց թողնվեց 12 մլն մանրաձուկ: Չունենալով սննդի գործում մրցակից՝ սիգը հիանալի կերպով հարմարվեց Սևանի պայմաններին և ներկայումս հանդիսանում է լճի հիմնական արդյունաբերական ձուկը: Ընդհանուր ծավալով ձկան որսից սիգին բաժին է ընկնում մոտավորապես 80%-ը, մնացած 20%-կազմում են կողակը և մասամբ բեղլուն:

Տնտեսական սուր ճգնաժամի և հանրապետության բնակչության սննդի գերակշռող բաժնի կտրուկ անկման պայմաններում, չքավոր ընտանիքների օրաբաժնում հատուկ կարևորություն ձեռք բերեց ձկան միսը:

Առաջին. դա կենդանական ծագում ունեցող արժեքավոր սպիտակուց է, երկրորդ. շուկայում 1 կգ ձուկն արժեր 3 անգամ էժան, քան տավարի միսը:

Սակայն երևի վաղ է գայթակղվել այն մտքով, որ Սևանն այս անգամ ևս ընդունակ է հանրապետության բնակչությանը փրկել աղետից: Սևանա լճի բնական ռեսուրսները ներկայումս սպառվել են մինչև ճգնաժամային նիշը, և նա իր բնական հարստությունը պահպանելու և բազմացնելու համար խիստ կարիք ունի իր համար այնքան կենսական կարևոր միջոցառումների իրականացման: Այն էլ բավական է, որ մենք ականատես եղանք, երբ 1972-1998 թվականների ժամանակաշրջանում լճի պահուստային ռեսուրսների հանդեպ այնպիսի անպատասխանատվության ու անհոգի վերաբերմունքի հետևանքով ի չիք դարձան Սևանը փրկելու համար հայ ժողովրդի չորսդարյա տիտանական ջանքերը: Ասվածը հաստատելու համար նշենք, որ եթե 1991 թվականի հունվարի 1-ի դրությամբ լճի մակարդակը կազմում էր 1898,01 մետր, ապա նույն ամսաթվով 1999 թվականին ջրի նիշն իջավ է մինչև 1896,62 մետրով: Հետևաբար 8 տարվա ընթացքում տեղ էր գտել ջրի մակարդակի իջեցում 1,39 մետրով, այսինքն՝ աննպատակ 1529 մլն մ^3 ջրի կորուստ է եղել: Արդյունքում 1,5 մլրդ մ^3 ավելի կորստի հետևանքով Սևանա լճին հասցրած վնասն առավել ակնառու դարձնելու համար նշենք, որ տվյալ մեծությունը համարժեք է հեռանկարում նշված Որոտան գետի ջրի մի մասը դեպի լիճն ուղղելու մոտավորապես տասնամյա ծավալին:

Հետևապես, մի կողմից ժողովրդի ջանքերով իրականացվում էր երկար տարիներ ձգվող բարդ հիդրոտեխնիկական կառույցը նրա համար, որպեսզի տարեկան Սևանին լրացուցիչ 165 մլն մ^3 ջուր մատակարարվի, իսկ մյուս կողմից, որոշ պետական չինովնիկների քմահաճությամբ առանց հաշվի առնելու կործանող էկոլոգիական հետևանքները՝ արդեն տեղ էր գտել Սևանա լճի ջրային պաշարների անվերահսկելի օգտագործումը:

Սևանա լճի ջրային պաշարների օգտագործման ողջ պատմությունը ուղղակի վկայությունն է նորանոր պրոբլեմների առաջացման ինչպես տնտեսական, այնպես էլ էկոլոգիական առումով: Դրա հետ մեկտեղ հույժ կարևոր է ուշադրության արժանացնել և հանգամանորեն ուսումնասիրվել ջրային պաշարների օգտագործման ուղղությամբ այլ տարբերակներ: Օրինակի համար վերցնենք Արարատյան դաշտավայրի հողերի ոռոգման խնդիրը: Լինելով պարտադիր ոռոգման տարածք՝ այստեղ յուրաքանչյուր հեկտարը (կապված մշակվող կուլտուրաների հետ) պահանջում է 8-ից մինչև 12 հազար մ^3 ոռոգելի ջուր: Նշենք, որ օգտագործվող ջրի քանակը որոշվել է ագրոտեխնիկայի կանոնների և ոռոգման նորմերի խիստ պահպանման պայմաններում: Բայց պատահում են դեպքեր և բավական հաճախ, երբ խախտվում են այդ կանոնները, հետևաբար ավելանում է ջրի ծախսը: Եթե յուրաքանչյուր ոռոգվող հեկտարին տրվի 10 հազ. մ^3 ջուր (որը պարտադիր է չոր՝ անապատային հողօգտագործության պայմաններում) և նկատի ունենալ, որ Արարատյան դաշտավայրում բավական բարձր է գետնաջրերի մակարդակը, ապա ռեալ վտանգ է առաջանում, որ ոռոգման սեզոնի համար հողն իր ակտիվ շերտում չի կարող պահել այդպիսի քանակությամբ ջուր, և դրա մի մասը կորչելու է կամ էլ լցվելու է գետնաջրերում՝ նպաստելով հողի աղակալմանը:

Ցավոք, բերված օրինակը ենթադրություն չէ, այլ Արարատյան դաշտավայրի ոռոգելի հողագործության իրականությունը: Տվյալ դեպքում տեղ է գտել ոչ միայն այնպիսի արժեքավոր բնական ռեսուրսի կորուստը, ինչպիսին ջուրն է, այլ նաև ոչնչով չփոխարինվող ազգային հարստությունը՝ հողը:

Արարատյան դաշտի ոռոգելի հողագործության ժամանակակից պրակտիկան և պատմությունը հաստատում են, որ հողի առավելագույն խոնավությունը ուղղակի աղակալման հետևանք է: Հարկ է խոստովանել, որ չորային պայմաններում հատկապես ջուրն է հանդիսանում հողագործության զարգացման լիմիտավորման գլխավոր գործոնը:

Սակայն ջուրն էլ է ջրից տարբերվում: Մի բան, երբ օգտագործվում են տվյալ ավազանի ջրային պաշարները, այսինքն այն ռեսուրսները, որոնք հենց բնության կողմից են փոխադրվում և որոնց շնորհիվ իրենց տեղային աղաջրային ռեժիմն են կարգավորում:

Մեկ այլ բան է, երբ որոշակի ռեգիոնին ջուր է տրվում ուրիշ ավազաններից: Այստեղ պետք է ծայրահեղ զգույշ լինել: Բանն այն է, ոռոգվող հողերը հանդիսանում են բավական բարդ կառավարվող համակարգ: Դրա հետ մեկտեղ՝ այն տուժվում է բավական լրջորեն, երբ առկա է անբավարար ոռոգումը: Սակայն քիչ չարիք չի պատճառում նաև ջրի կորուստը: Մեկընդմիշտ պետք է հիշել, որ ոռոգվող հողերի արդյունավետությունն ամենից առաջ պայմանավորված է հողի հատկությամբ և ոչ թե բույսերի: Վերջիններս ջրում ստերեոտիպ հակազդեցություն ունեն: Մինչև որոշակի աստիճան հողի հարթեցման դեպքում, բույսերն ակտիվորեն հակազդում են ջրի գործոնի վրա՝ հողում պահպանվող կենսականորեն անհրաժեշտ հանքային և օրգանական նյութերը լուծելու և իրենց հասցնելու (յուրացնելու) համար:

Իրենց կարիքների բավարարման չափով բույսերը ջրում բացասաբար են հակազդում ավելորդ ջրի վրա, բերքատվությունը նվազում է, այնուհետև ընկնում: Այնպես որ բույսերի տնօրինությանը վերապահված կախվածության գրաֆիկորեն արտացոլումը բիոզանգվածների և ջրի ընդհանուր քանակի միջև միանշանակ սխալ է:

Կարևոր է նկատի ունենալ, որ թերոռոգումը կարող է հանգեցնել կորուստների, որոնք գումարվում են տվյալ տարվա բերքի թերհավաքմանը: Հակառակ դեպքում գործ ունենք գերոռոգման հետ, որը հանգեցնելու է ոչ միայն բերքի, ջրի նվազեցմանը, այլև հողի կորստին: Ընդ որում, կորուստներն առավել շոշափելի են, քան բերքի թերհավաքումը:

Հայաստանի՝ սակավ ջրային պաշարներ ունեցող հանրապետության համար ուժի մեջ մտած դրա օգտագործման ձևավորված պրակտիկան անհրաժեշտ է քննել ոչ որպես «ռեսուրսային ճգնաժամ», այլ

ամենից առաջ բնական ռեսուրսների պոտենցիալի հանդեպ տնտեսավարման և սպառողական հարաբերությունների անթույլատրելի մեթոդների հետևանքով առաջացած ճգնաժամային իրավիճակ:

Ջրի սպառման վայրագ վարվելակարգի պայմաններում և ունեցած պահուստների օգտագործման հնարավորությունների մասին վկայում են առանձին տարիներին Սևանա լճից ջրի բացթողնելու տվյալները: Այսպես, օրինակ, 1990 թվականի սկզբին ջրի մակարդակը 1897,81 հազ. մետր էր, բացթողնման ծավալը տարվա ընթացքում կազմում էր 207 մլն մ^3, որը զգալի չափով նպաստեց Սևանի մակարդակի բարձրացմանը, նրա նիշը 1991 թվականի հունվարի 1-ի դրությամբ բարձրացավ 20 սմ-ով և կազմեց 1898,01 մետր: Սկսած 1996 թվականից և ներկայումս լճից տարեկան ջրի բացթողնման ծավալի կրճատման նշանակալի նվազման միտում է նկատվում՝ 1998թ. 353 մլն մ^3-ից մինչև 250 մլն մ^3: Եղած հաշվարկների համաձայն՝ 1999 թվականին ջրի բացթողումը չպետք է անցնել 200 մլն մ^3-ից: Սակայն նկատենք, որ Սևանից ջրի կրճատման վերաբերյալ առձեռն փաստերը չի կարելի որակավորել որպես ջրային ռեսուրսների օգտագործման ուղղությամբ ձեռք բերված որոշակի հաջողություն: Դա սոսկ ուղղակի ցանքատարածությունների կրճատման հետևանքով ոռոգման ջրի պահանջարկի կրճատման վկայությունն է: Եթե այսուհետև հայ գյուղացին միայնակ մնա մշակվող հողի հետ, և դրա հետ մեկտեղ պահպանվի գոյություն ունեցող հարկային համակարգը և ոռոգման ջրի օգտագործման անչափ բարձր վարձը, ապա բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ արդեն առաջիկա հեռանկարում ոռոգելի հողատարածքները և, հետևաբար, նաև Սևանից ոռոգման կարիքների համար ջրի բացթողնման տարեկան ծավալը կհասցվի մինչև 120 մլն մ^3:

ՌԱՖԱՅԵԼ ԻՍԱԽԱՆՈՎ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող տ.գ.թ.

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՌԵԳԻՈՆԱԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժողովրդական տնտեսության զարգացումն ինտենսիվ ուղու վրա փոխադրելու արդի փուլում բնօգտագործման ռացիոնալացումը և հասարակական արտադրության ու բնական համակարգերի զարգացման միջև ներդաշնակության ապահովումը դասվում են հատուկ կարևորության և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շարքում: Բնօգտագործման պրոցեսների կառավարման և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների նյութականացման շնորհիվ միայն կարելի է ապահովել բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի վրա տեխնոգեն բարձր ծանրաբեռնվածությունը: Շրջակա միջավայրի վրա տեխնոգեն բարձր ծանրաբեռնվածության հետևանքով առանձին շրջաններում էկոլոգիական հաշվեկշռի խախտումներն ապացուցում են, որ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը միշտ չէ, որ համաձայնեցվում է բնության զարգացման օրենքների հետ:

Ներկայումս ավելի հաճախ առանձին բնական համակարգերի էկոլոգիական իրավիճակի այս կամ այն չափով լարվածությունը պայմանավորված է բնական ռեսուրսների խիստ նվազեցման և շրջակա միջավայրի աղտոտման հետ: Ինչպես բնական ռեսուրսների, այնպես էլ բնության ինքնավերականգնման ունակության սահմանափակության փաստը ներկայումս դարձել է անժխտելի ճշմարտություն:

Գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա արտադրության համակողմանի ինտենսիվացման կուրսը պահանջում է պլանաչափորեն, խորը կշռադատվածությամբ ապահովել բոլոր տեսակի, այդ թվում բնական, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնօգտագործման բնագավառում ինտենսիվացումը պահանջում է բնական ռեսուրսների համակողմանի և առավել լրիվ օգտագործման ուղիով տնտեսական շրջանառության մեջ այդ ռեսուրսներն ընդգրկելու աճի տեմպերի կանխարգելում, վերջնական արդյունքի միավորին ընկնող դրանց տեսակարար ծախսի նվազեցում: Այս ամենը սերտորեն առնչվում են արտադրության նյութատարության կրճատման պրոբլեմի հետ: Արտադրանքի բարձր նյութատարությունը ժողովրդական տնտեսության էքստենսիվ զարգացման անխուսափելի հետևանքն է: Երկրի տնտեսության մեջ արտադրանքի նյութատարության նվազեցման խնդիրը նոր չէ: Այդ բարդ խնդրի լուծման գլխավոր ուղին համակողմանի ռեսուրսախնայողությունն է, որը հենվում է գիտատեխնիկական առաջընթացի իսկապես հեղափոխական նվաճումների օգտագործման, մասնավորապես տեխնիկայի նոր սերունդների կիրառման, սկզբունքորեն նոր տեխնոլոգիական պրոցեսների ներդրման վրա:

Արդի գիտատեխնիկական առաջընթացի կարևոր առանձնահատկությունը բնության հետ առկա տեխնիկայի և տեխնոլոգիայի էկոլոգիական համատեղելիությունն է, որը ենթադրում է բնական ռեսուրսների համալիրային և բազմանպատակային օգտագործում, շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն գործունեության բացասական հետևանքների նվազեցում:

Հասարակությունը չի կարող ինքնակամորեն արգելակել ինչպես իր սեփական զարգացումը, այնպես էլ բնության վրա դրա ունենալիք ազդեցությունը: Հասարակության զարգացումով այդ ազդեցությունը ոչ թե կնվազի, այլ անխուսափելիորեն կաճի: Սակայն այդ չպետք է խախտի բնության գործունեության, ինքնակարգավորման և ինքնավերարտադրման բարդ մեխանիզմը:

Բնության և մարդու միջև փոխհարաբերությունների ներդաշնակության խնդիրը շատ բարդ է: Այդ առումով գիտատեխնիկական առաջընթացն անընդհատ առաջադրում է նոր հիմնախնդիրներ: Հասարակության